ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝ ակադ. Հրանդ Թամրազեանի անուան Հայ գրականութեան պատմութեան ամբիոնի հայցորդ

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ «ԵՂԻՑԻ ԼՈՅՍ» ԳՐՔՈՒՄ

(Ծննդեան 95-ամեակի առթիւ)

Ամէն ժամանակաշրջան ունի իր բանաստեղծը, ով յայտնաբերում է տուեալ ժամանակի ոգին եւ մարգարէաբար պատգամներ յղում իր ժողովրդին։ Այսօր էլ շատերի համար Պարոյր Սեւակի պոեզիան նուիրական ու թանկ գաղտնիքներով լեցուն սպասուած մի նամակ է։

Պարոյր Սեւակը մէկն է իր իսկ երգած «մեծերից», ովքեր «Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնւում են նրանք ճիշդ ժամանակին» եւ «նոր օրէնք ու կարգ սահմանում», գեղարուեստական խօսքի նոր հորիզոններ բացում հայրենի մշակոյթի զարգացմանը նոր ընթացք տալու համար։ Երեք տասնամեակ տեւած Սեւակի ստեղծագործական կեանքը յագեցած էր նոր ուղիների խիզախ որոնումներով։

Այստեղ տեղին է յիշել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինի արտայայտաց կարծիքը բանաստեղծի հոգեհանգստի ժամանակ. «Սեւակի ծնունդը՝ մեր կեանքի, մեր մշակոյթի, մեր ներկայի ու ապագայի համար եղել է ճշմարտապէս մի «Եղիցի Լոյս», Սեւակը մէկն է նրանցից, ով պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահներից մէկն է աշխարհում...»։

Պարոյր Սեւակը յեղաշրջեց հայ պոեզիայի հունը՝ ստեղծելով բանաստեղծական իր դպրոցը։ «Անլռելի զանգակատուն» պոեմը, «Մարդը ափի մէջ» եւ «Եղիցի լոյս» ժողովածուները նախանշեցին հայ պոեզիայի հետագայ զարգացումը։ Նրա ասելիքը բազմաբեւեռ էր, խորքային ու արդիական։

Պարոյր Սեւակի վերջին՝ «Եղիցի լոյս» ժողովածուն լոյս աշխարհ գալու (1969 թ.) հէնց առաջին պահից մերժուեց ժամանակի գրաքննութեան կողմից։ Կարճ ժամանակ անց պէտք է գրուէր. «Այս գիրքը պիտի կարդացուի որպէս հայ հոգու Աւետարան, հաւատի հանգանակ ու հայրենասիրական Սաղմոս։ Հայ Հոգին ու Հայ արիւնին ուխտասեղանին վրայ պիտի զետեղուի այս Սուրբ Մատեանը, որպէս Լուսաւորչի Կանթեղ ու հայրենաշունչ տաղարան»[1]։

«Եղիցի լոյս»-ը գրական ասպարէզ իջաւ ընդդէմ «փուչ ու ճռճռան, գանգրահեր ու ուռուցիկ բառերի ոտանաւորչութեան» եւ ընդդէմ խաւարամտութեան։ Բանաստեղծին ծնեց հայ ժողովուրդը, իսկ նրա մատեանը գրուեց ժամանակի պահանջով։ Ժամանակի բազում ստեղծագործող-մտաւորականներից Սեւակն առաջինն էր, որ հնչեցրեց

---

[1] **«Սփիւռք»**, Պէյրութ, 19 Սեպտեմբեր, 1971։

տագնապի այդ կոչնակը։ «Պոեզիան մարդկային ինքնարտայայտութեան ձեւերից մէկն է, մարդկային խօսակցութեան ձեւերից մէկը»,- մեկնաբանում էր նա։ Ինչպէս իր մեծ նախորդը՝ Չարենցը, նա եւս հաւատում էր խօսքի ուժին՝ պոեզիայով կեանքը վերափոխելու կարողութեանը։

Չարենցի «Գիրք ճանապարհի»-ից յետոյ Սեւակի «Եղիցի լոյս»-ը հայ գրականութեան մէջ նոր ասելիքի, մտածողութեան նոր որակի սկիզբ էր ազդարարում։ «Եղիցի լոյս»-ը ամբողջովին փառաբանութիւն է Լոյսի, Մաքրութեան եւ Բարութեան։ Այն ծնուել է լոյսի ու ստուերի, կեղծիքի եւ ճշմարտութեան ուժգին բախումից։

«Մարդը ափի մէջ» ժողովածոյից յետոյ մարդու մասին մտորումների, նրա հոգեկան տագնապների եւ անողոք ժամանակի մէջ մարդկային երկփեղկուածութեան աղէտալի փաստի դիմաց բանաստեղծը ծառացաւ իր ամբողջ հասակով՝ որպէս մեծ մարդերգու եւ մարդկային ճակատագրերի հանդէպ ուշադիր մեծ անհատ։ «Եղիցի լոյս»-ն այդ մտորումների անհերքելի վկայութիւնն է, «դրա բարձրագոյն աստիճանը»։

Գրքում աննախադէպ ճշդութեամբ քննութեան է առնուած ժամանակի լոյսն ու ստուերը. եթէ ««Մարդը ափի մէջ» շարքում Սեւակն իրեն՝ պատմականօրէն որոշակի մարդուն էր դրել ափի մէջ եւ իր հանրային ու գեղագիտական իտէալի տեսակէտից քննում ու վերլուծում էր նրա մտքի ու հոգու լոյսերն ու ստուերները, ապա «Եղիցի լոյս»-ի շատ գործերում ափի մէջ է դրուած ժամանակակից աշխարհը եւ նոյն իտէալի բարձունքից քննւում ու վերլուծւում են սրա լոյսերն ու ստուերները»[2]։ Այս առումով իր շատ սերնդակիցներից, ովքեր նոյնպէս իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ժամանակի սոցիալ-քաղաքական անարդարութիւնների դիմաց, Սեւակն առաջինն էր, որ պատրաստ էր անձը զոհել յանուն լոյսի.

Իսկ թէ հարկ լինի նամանաւանդ պէտք,
Ես Խաւարի հետ կը մեկնեմ Ինքքս՝
Դառնալով Նրա թագաւորութեան
Հին Հպատակն ու նոր Քաղաքացին...

Դրա դիմաց բանաստեղծը պահանջում է դիմաւորել արշալոյսի գալուստը. «Անդարձ կը մեկնեմ Խաւարի հետ Ես, // Միայն թէ մեր այդ մեկնումից յետոյ // Ժամանի ինքը Արշալո՛յսը, //Գա՛...»:

Պատմական ժամանակաշրջանը Սեւակի նեարդերը դարձրել էր մերկ, եւ նա անյագ ծարաւով մղուեց բացայայտելու սուտը։ Եւ եթէ «Մարդը ափի մէջ» Սեւակը հերձում էր սուտը, մե՛ծ յաջողութեամբ տարածուող սուտը, որպէսզի հասկանար, թէ «ինչո՞ւմն է բանը եւ բանալիքը...» («Դառնում եմ»), ապա «Եղիցի լոյս»-ում մտքի վերլուծական լարուածութիւնը հասնում է բացառիկ խտացումների, այս անգամ արդէն պահանջելով, որպէսզի գործի լեզուն՝ որպէս ճշմարտութեան միակ աւետաբեր. «Մենք ուզում ենք գործի լեզո՛ւն, //Բայց ո՛չ իբրեւ երկանք ստի //Ու ջրաղաց խաբէութեան»:

Այս ամէնին հասու դառնալու համար Սեւակն ընդամէնը մէկ ցանկութիւն ունէր՝ «պարզ տեսնելու կարողութիւնն աստուածային...» («Հասարակ պահանջ»), ձգտելով տեսնել թէ ո՞ր ճանապարհով, մինչեւ ո՞ւր եւ ի՞նչ նպատակով է քայլում մարդկութիւնը.

Եւ... նո՛ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնէ ինձ, միայն ինձ համար,
Որպէսզի նախ ես
Եւ հէնց ինձ վրայ

[2] **Արիստակեսեան Ա.,** «Պարոյր Սեւակ», Երեւան, 1984, էջ 349:

Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթէ լինի այս անգամ սարքին՝
Նո՛ր միայն վստահ յանձնեմ ձեզ նաեւ,
Եւ ապրէք այնտեղ դուք մարդավայել:

Մարդկային ճակատագրերի մասին մտածող բանաստեղծը ամբողջ ուժով ձաղկում է սուտը, ինչը կարող է բոլոր ժամանակների ամէն տեսակի չարիքի ու մոլորութիւնների պատճառ հանդիսանալ: Այդ բանաձեւումներից մէկն էլ այս տողերն են. «-Որտե՞ղ են ապրում քամիները: //-Պալատների մէջ: //-Եւ անշո՛ւշտ մեր իսկ ռունգերում»:

Սեւակի պոեզիան արդիական է այսօր, արդիական կը լինի նաեւ վաղը: Այդպէս է, որովհետեւ «Նա ճանաչել է լոյսը աւելի, քան մենք ենթադրում ենք»:

1960-ական թթ. հայ պոեզիայում մարդու եւ ժամանակի միջեւ բացուած երկխօսութեան բարձրագոյն արտայայտութիւնը «Եղիցի լոյս» ժողովածուն է, որը տպագրուեց 1969-ին, բայց ունեցաւ ճիշդ ու ճիշդ Չարենցի վերջին մատեանի՝ «Գիրք Ճանապարհի» ժողովածոյի ճակատագիրը: Չարամիտ զրպարտիչների հրահրմամբ՝ այն տպարանից ուղարկուեց ոչ թէ ընթերցողին, այլ արգելուեց ու վերցուեց կալանքի եւ մի քանի բանաստեղծութիւնների հանում-յօշոտում-կրճատումով լոյս տեսաւ 1971-ին՝ հեղինակի եղերական մահից յետոյ[3]:

Եթէ «Անլռելի Զանգակատուն»-ը ռումբի զօրութեամբ շեփորեց Սեւակի մուտքը դէպի հայ բանաստեղծութիւն, եթէ «Մարդը ափի մէջ» քերթուածքները եկան այդ տաղանդի տոկունութիւնն ու իրաւացիութիւնը երկրորդելու, «Եղիցի լոյս»-ը, սակայն, եկաւ հայ բանաստեղծութիւնը օժտելու աննախընթաց պատգամով եւ եզակի ուժգնութեամբ երկընուած գլուխ-գործոցով[4]:

Ամբողջ հատորը զտարիւն բանաստեղծութիւն է, բառի Սեւակեան իմաստով ու բծախնդրութեամբ: Նրանցից իւրաքանչիւր տող բուռն ու թունդ հրթիռ է՝ ուղղուած ճակատագրի դէմ, դժխեմ ճակատագրի, որի անցողակիութեան համոզումը կազմում է իր պատգամի գլխաւոր առանցքը:

«Եղիցի լոյս»-ը մեր գրականութեանն օժտեց երրորդ այլաբանական գործով:

Ռուբէն Զարդարեանի «Գամփռը» մի քանի էջերով խտացուած բողոքի անուղղակի պոռթկում էր Օսմանեան վարչակարգի դէմ:

Աւելի ուշ, Եղիշէ Չարենցը, սովետական վարչակարգի տակ իր երազած ու երգած իրաւակարգից յուսախաբ, պիտի գար հայ բանաստեղծութեանն օժտելու այլաբանական ձեւով, բայց հայրենասիրական թեմայով դիւցազներգութեամբ՝ «Մահուան տեսիլ»-ը:

Եւ ահա երրորդը, Պ. Սեւակի «Եղիցի լոյս»-ը: Լո՛յս թող լինի,- ասաց խաւարի դէմ պայքարող գանգրահեր բանաստեղծը, բայց ինքը չտեսաւ այդ լոյսը:

Հայ բանաստեղծութեան պատմութեան մէջ եզակի էր Չարենցի «Մահուան տեսիլ»-ը իր շնչով, տարողութեամբ եւ սովետական արժէքների դիմաշրջական նոր դիրքորոշումով, բայց «Եղիցի լոյս»-ը եկաւ աւելի խոր, հիմնական տուեալներով պոռթկալու սովետական վարչակարգի դէմ, նրա բռնութեանը հակադրելու հայկական բարութիւնը:

«Եղիցի լոյս»-ը՝ սովորական բանաստեղծութիւնների հատոր չէ, այն հասկանալու համար անհրաժեշտ է ծանօթ լինել.

1. Սեւակի ստեղծագործական աշխարհին, ոճին, իմացական եւ գաղափարական

[3] **Մուրատեան Ս.,** Պարոյր Սեւակ: http://sevakparuyr.do.am/publ/hodvac›/1-1-0-9 :
[4] «**Հուր**» ամսագրի մատենաշար թիւ 2, Արմէն Տօնոյեան, Պարոյր Սեւակ, Թեհրան 1973, էջ 68:

ուղղութեանը։

2. Հանգամանօրէն ծանօթ լինել սովետական իրականութեանը եւ այդ մթնոլորտում յիսուն տարուց աւելի ապրող հայ ժողովորդին։

3. Մտերմանալ բանաստեղծութեան հանդէպ Սեւակի նոր ու նորարարական կեցուածքին։

Այս երեք կէտերի խտացուած նմոյշն է «Եղիցի լոյս»-ի առաջին էջով ներկայացուած «Նորօրեայ աղօթք»-ը։

Արդէն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՛տ եմ վախենում
Բիւրաւոր ու բո՛ւթ հաւատացեալից,
Բիւրատես ու սո՛ւտ հաւատացեալից:
Եթէ Աստուած էք՝
Փչեցէ՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցէ՛ք նրանց կանթեղներն ամէն,
Հանգցրէ՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... եղիցի լո՛յս:

Ժամանակակից մարդը մարդկութեան նոր մեղքերի դիմաց աղօթք է ուղղում Աստծուն։ Ամէն ինչ սկսւում է շատ աւանդական պատկեր-խորհրդանշանների յայտնաբերումով՝ հաւատի տաճար, վառվող մոմեր, ծնրադրած հաւատացեալ, ում աղօթքը ոչ թէ իր ու մերձաւորների հոգու փրկութեան համար է, այլ՝ համայն մարդկութեան։ Փրկութեան յոյսի արտայայտութիւնը դարձեալ ամենաաւանդական խորհրդանշանն է՝ լոյսը։ «Եղիցի լոյս» շարքն այսպէս մի ամբողջ ծիսակատարութիւն է՝ աղօթքներով, պատարագներով, ժամերգութիւններով[5]։ Որքան էլ ժամանակ անցնի՝ վախն ու մտահոգութիւնը շարունակում են մնալ Դամոկլեան սրի նման կախուած քաղաքացիների գլխին։ Վախ՝ «Բիւրաւոր, սուտ, բութ» հաւատացեալից։ Ո՞վ է, սակայն, այդ հաւատացեալը, ումի՞ց պէտք է այսքան սարսափել, որո՞նց կանթեղներն ու ջահերը պէտք է մարել եւ նրանց շիջումով միայն ստեղծել մեր լոյսը...

Մեր թշնամու, մեր տիրակալի։ Նրա, որ մեզ իր ճիրանների մէջ առած, մեր էութիւնն է ցնցում, մեր ազգային գոյութիւնն աղարտում։

Այդ թշնամին մէկից աւելի անուններ ունի։ Տարբեր ժամանակներում եւ տարբեր քաղաքական պայմաններում, ունեցել ենք բիւրաւոր ու բիւրատեսք կեղծ հաւատացեալներ, բարեկամական թշնամիներ, որոնց մատաղն անգամ գողացուած էր, իսկ աղօթքը ոչ թէ հոգու խօսք էր, այլ «անգի՛ր-ինքնահո՛ս-հաշուեկշռուա՛ծ» բառերի շարան, որոնք, սակայն, իրենց «սողոսկուն աղօթք»-ներով չեն կարողացել խափանել մեր լոյսը եւ եթէ նոյնիսկ անցնի 1010 տարի, պիտի ձերբազատուենք նման «բարեկամներից», նման խնամակալներից, պիտի մարե՛ն այլազան ջահերը, որպէսզի մեր ջահով միայն լուսաւորուենք։

Եւ մեր ջահերի յաղթանակի համար անհրաժեշտ է պայքարել. պայքարել անյուսահատ, անցեալի հպարութեամբ, ներկայի հաւատով։ Կանգնել Արարատեան պատուանդանի վրայ ու հայավայել պայքար շղթայազերծել բոլոր կեղծ ջահերի դէմ։ Պայքար ո՛չ թէ զէնքով ու զրահով, որովհետեւ՝

Դարեր են եկել ու դարեր անցել,
Ոչ մէկի վրայ մենք չենք բռնացել.

[5] Հայոց լեզու եւ գրականութիւն գիտամեթոդական ամսագիր, 2011 թիւ 8 (79), էջ 9:

Եթէ գերել ենք՝
Լոկ մեր աչքերով.
Եթէ տիրել ենք՝
Լոկ մեր գրքերով.
Եթէ իշխել ենք՝
Աչքերով միայն
Ու եթէ ճնշել՝
Ձիրքերով միայն...

Այդ ձեւի կայսերապաշտութիւնը կարող է նաեւ պարտութեան մատնել խաւարը, մթագնութիւնը։ Բանաստեղծը աղաչում է Տէր Աստծուց, որ հոգիները ճնշող այդ խաւարը հեռանայ։ Այստեղ արդէն ամէն կասկած փարատւում է եւ բանաստեղծի յանդուգն դիրքորոշումը, խաւարի դէմ պարզուած դրօշակը այնքան թափանցիկութեամբ մեզ մղում է մտածելու մեր երկրի նոր վարչակարգի մասին։

Դժգոհութիւն ու բողոք չի բանաձեւում, որովհետեւ վերը նշած մեր առաջին երկու տողերը վկայ, մենք խաղաղ ու հանդարտ ենք մնում, չենք մոռանում նոյնիսկ նրա բերած «Բարիք»-ը։

«Միայն թէ թող նա թողնի հեռանայ»:

Եւ եթէ հարկ լինի, բանաստեղծը պատրաստ է ինքն անձամբ եւ մի ամբողջ սերունդ իր հետ միասին կորստեան դատապարտել, ողջակիզել, մեր դարաւոր օջախից հեռացնելու սեւ մութ ամպերը, որպէսզի

«Ժամանի ինքը Արշալոյսը»:

Գալիս է առաւօտեան աղօթքի պահը, որը արշալոյսի ողջունումն է։ Անընդհատ լոյսի շուրջ պտտուող միտքը, ի վերջոյ, յայտնագործում է «Լոյսի աղբիւրը», որը ելք է՝ մարդուն պաշարած անյոյս խաւարից։ Իրեն «լուսաւորութեան նախարար» հռչակած բանաստեղծն արդէն ոչ միայն յորդորում, այլեւ հրամայում է՝ «Վառեցէ՛ք լոյսերը», եւ սուտ երազանքներին հակադրում կեանքին ուղղուած առողջ ու սթափ հայեացք։

Ամբողջ հատորը բաժանւում է եօթ գլխաւոր մասերի։

«Եղիցի լոյս» բաժինն ունի 15 բանաստեղծութիւն, որոնք իրենց թեմաների այլազանութեամբ խտացնում են գրքի պատգամները։ Այս բաժնում է, որ բանաստեղծը հրապարակ է իջնում իւրայատուկ համարձակութեամբ իր ջղուտ մատների մէջ առած ճզմում է կեանքը, աշխարհն ու մարդկանց, սեղմում է նրանց՝ նրանցից ճշմարիտ կեանք եւ արդար մարդկութիւն քամելու։

«Դիմակներ» բաժնի ինքնատիպ պատկերներով եւ վառ գոյներով բանաստեղծութիւնները կեղծաւոր, քծնող, դերակատար, խամաճիկ մարդկանց դէմ է, որոնց մէկ աչքին շարունակ ժպիտ է, միւսին՝ բիրտ լրջութիւն, ժպիտի մէջ կորել է դէմքը, ինչպէս հոգին մութ անստուգութեան մէջ։

Այնքան կեղծ ու այնքան հանրայայտ են իրենց դիմակներով այդ ծաղրածուները, որ ընկերութիւնը նրանց հարազատ դիմագծերով հազիւ է կարողանում ճանաչել։

«Դարակէսի պարգեւներ»-ում բանաստեղծը չի բաւարարւում վերոյիշեալ տիպարները թուելուց, այլ պատռելով այդ դիմակները հասնում է նրանց հոգիներին, ձաղկում տարիներ շարունակ աթոռներ, դիրքեր գրաւող այն ջոջերին, որոնք իրենց սառնասրտութեամբ եւ կեղծաւորութեամբ հակակրանք են սփռում ու հիւանդացնում իրենց դիմող նոյնիսկ առողջներին։

«Ողջոյնի քմայքներ»-ը գալիս են մարդկութեանը բերելու արշալոյսի ողջոյնները, կեանքի ժպիտը, բարեւների անսպառ բարիքը, նուիրումի, ծառայասիրութեան գերա-

գոյն ուրախութիւնը, անանձնական հաճոյքը։

«Նորից չեն սիրում, սիրում են կրկին» շարքը հարուստ է իր այլազանութեամբ կեանքից վերցուած տարբեր երեւոյթների խոր ու գեղարուեստական վերլուծումներով։

«Աստծու քարտուղարը» ինքն է, բանաստեղծը, որ փորձում է ուրուագծել իր առաքելութիւնները։ Փնտրտուքներ, հաստատումներ, երեւոյթների շեշտակի ընդգծումներ։ Քաջութիւն, ժամանակների խորհուրդը արձանագրել կարողանալու, այդ խորհուրդների ստեղծման առթիւ բարձրացած փոթորիկների մէջ կանգուն մնալու եւ տիրապետելու, օգտագործելու, դրականացնելու այդ հողմային արշաւանքները։

«Եռաձայն Պատարագ»-ը «Եղիցի լոյս»-ի վերջին բաժինն է։ Մեծ եղեռնին նուիրուած երեք առնական կոչումների պատարագ, ուր մարդկային քաղաքակրթութեան խորան է հանւում խաչեալ մի ժողովուրդ, հաւատացեալների հոծ բազմութիւն՝ կեղծ ջերմեռանդութեան մթնոլորտում։

Այստեղ է մեր վաղ երէկը, մեր սեւ երէկը, «մորթուած արշալոյսներից» յառնած մի ժողովուրդ որ կարող է միայն հայ կոչուել։

«Անլռելի Զանգակատուն»-ից յետոյ «Մարդը ափի մէջ» ժողովածույով մեզ հասած հայրենասիրութիւնը ուժգնացել եւ խորացել է այս «Եղիցի լոյս»-ով։ Սակայն, այս ուժգնութեան մէջ բանաստեղծը մերժում է հայրենիքի գովքը հիւսել զինուորական յաղթանակներով։ Ամեհանում է իր ազգի բարութեան մէջ, բարութիւն, որ դառնում է ուժ՝ չարի դէմ։ Մեռնում է ճակատելով եւ իր նահատակման ընթացքում իսկ խեղդելու ոսոխին։ Բարութեան զօրութիւնից կեանք է բխում, իսկ այդ ճամփով բխած կեանքին ծանօթ ենք մենք, մեր պատմութեան վկայութեամբ։

Այնքան հզօր է իր երթը, որի խորութիւնը, որի անջնջելի տպաւորութիւնը աւելի լրջութիւն, աւելի ողջախոհութիւն եւ կշիռ է տալիս մեր ազգաշունչ գրականութեանը, պատմաբանների ուսումնասիրութիւններից աւելի ազդու՝ պաշտպանում է հայկական դատը։

«Եռաձայն Պատարագ»-ը «Անլռելի Զանգակատուն»-ից յետոյ ստեղծագործական շքեղութիւն է՝ պատմական իրականութիւններով լուսաւորուած։

Երկնքից առկախ մի լեռնակղզի՝
Հայաստան աշխարհ։
Երկնքից առկախ այդ լեռնակղզու ուղիղ կենտրոնում՝
Երկու զանգ հսկայ եւ անձեռագործ։
Եւ այնքա՜ն հսկայ, այնքա՜ն վիթխարի,
որ չէին կարող որեւէ կեռից ոչ մի կերպ կախուել,
Ուստի պարզապէս կործուած են հողին։
Անունն՝ Արարատ
կամ
Սիս ու Մասիս։

Այս աշխարհագրութեամբ է սկսում իր պատարագը։ Պատարագ, որի խորանն է Հայաստան աշխարհի կենտրոնում դրուած Արարատը, որպէսզի այդ կենտրոնից ամէն ուղղութեամբ իր հմայքին յառեն մեր մայր հողի բռնագրաւեալ բեկորները։ Այդ բռնագրաւեալ սրբութիւնների կորուստն է պատարագում բանաստեղծը։ Եւ այս պատարագը երեք ձայներով է կատարում՝ «Ողբամ Մեռելոց», «Բեկանեմ Շանթեր», «Կոչեմ Ապրողաց»։ Այս խորագրերը՝ վերցրած շուեյցարական Շաֆհաուզեն բնակավայրի 1486 թ. տաճարի զանգի լատինատառ փորագրութիւնից, որ բնաբան էր դարձրել Շիլլերը իր «Զանգակի երգը» բանաստեղծութեան համար, դարձել են

«Եռաձայն պատարագ» պոեմի կառույցը թելադրող գործոններ ու հեղինակի ռեքվիեմ-մենախօսութիւնն ուղղորդող բանաձեւեր[6]։

Առաջին ձայնով՝ «Ողբամ Մեռելոց»՝ նկարագրում է եղեռնը իր առարկայական դաժանութեամբ։ Ամբողջ սեւ ու կարմիր, սուգ ու աւեր։ Բանաստեղծը ողբում է կորուստը մեր բիւր-բիւրաւոր անմեղների։ Այս տողերին յաջորդում է պատմութիւնը։ Բանաստեղծը երկրորդ ձայնով «Բեկանեմ Շանթեր»՝ տալիս է այդ պատմութեան անդրադարձը միջազգային պատմութեան մէջ։ 1915։ Առաջին աշխարհամարտ, քաղաքակիրթ ազգերի վայրագութիւններ։

Ազգաշունչ կրքոտ տողեր, սառած աղօթքներ, աղեկտուր կոչեր, անապատների մէջ կմախքացած ոսկորներ, որդեկորոյս մայրերի պաղատանքներ եւ... Աստուծոյ վերապահութիւնը։ Այս բոլորը գալիս են նկարագարդելու շանթերով բեկանուած պատմութիւնը։ Շանթերի զօրութեամբ գրաբար աղօթքների մէջբերումները յատուկ զայրոյթով զինում են հրալեզու տողերը, որոնցում նուրբ ափսօսանքին միանում է յաղթական՝ նոյնիսկ «ատամով, թուքով», «մարմնով ու հոգով».

Եւ Աստուա՛ծ գիտի, յաղթեցի՛ն նրանք
իրենց հնօրեայ անարգ թշնամուն՝
ոչ միայն իբրեւ նորօրեայ Յուդիթ...
Թէպէտ կապկպուած ու գերի տարուած,
Թէպէտ կեղեքուած ու բռնաբարուած,
փերթուելով թէպէտ,
թէպէտ ջարդուելով,
թէպէտ պարտուելով՝
յաղթեցի՛ն նրանք։

Այո՛, յաղթեցինք, բայց ի՞նչ գնով, այդ մասին իր կոտորածների եւ աքսորի նկարագրութիւններում այնքան ցնցող պատկերներ ունի, որոնց մենք հազիւ թէ հանդիպած լինենք եղեռնի ականատեսի յուշագրութիւններում, տառապանքների, մահացումների դժոխային հնարումներ, որոնք միայն կարող էին ծնունդ առնել պատմաբան ու վառ երեւակայութեան տէր բանաստեղծի մտքից։

«Կոչեմ Ապրողաց»-ը պատարագի յաղթական երրորդ ձայնն է, վերապրողների, յաղթանակի ձայնը, ձայնը նրանց, որոնք շարունակում են տէր կանգնել հայրենիքին, որովհետեւ ճիշդ է, մեր հայրենիքը մեզնից դատարկուեց, բայց՝

Մենք չենք դատարկուել մեր հայրենիքից՝
Մենք սպանուեցինք մեր հայրենիքում,
Բայց հայրենիքը մեր մէջ չսպանուե՛ց,
Ո՛չ, ապրում է նա կրկնակի՛ կեանքով։

Այս կրկնակի կեանքը սկսաւ ունենալ մեր հայրենիքը այն օրից սկսեալ, երբ նրա կորստեան վճիռը կարդացուեց։ Վերապրեց ժողովուրդը, ծնունդ առաւ հայրենական օջախը։

Այսօր պատարագ է հայ իրականութեան մէջ։ Հոգեհանգիստ՝ մեր բիւրաւոր նահատակներին։ Ղօղանջում են մասիսների զանգերը։

Նահատակների վերածնունդ է, նոյնիսկ եթէ հայութիւնը մնում է «տակաւին ցիր... ցան եւ սփիւռք» պիտի դառնայ մէկ ազգ ու մէկ հայրենիք։ Եւ անհրաժեշտ է որ հոգեկան

---

[6] **Մուրատեան Ս.,** Պարոյր Սեւակ։ http://sevakparuyr.do.am/publ/hodvac'/1-1-0-9 :

այս ժողովրդի միութիւնը իրականանայ այսօր, կարմիր ջարդի ահաւորութիւնից յետոյ զոհ չգնալու համար այս անգամ սպիտակ ջարդի։

Տնից դուրս ամէն հայի սպառնում է այս վտանգը, որովհետեւ՝
Օտարութեան մէջ ազատ լինելն էլ այլ գերութիւն է,
Եւ տան մէջ նոյնիսկ գերի լինելը՝ այլ ազատութիւն,
Իսկ տունն էլ տո՛ւն չէ այլ հայրենի՛ք է,
Եւ ի՜նչ հայրենիք
Գայլի երախից ձեռքերով խլուած մի Դաւիթ մանուկ։

Եւ հայը, ընկած օտար ճանապարհներին, թափառական, բռնի աքսորուած իր մայր հողից, խենթի պէս սիրում է «երկանքաքարի ակռայից պրծած ողջանդամ» այդ եդեմը. սիրում է սիրահարի նման, սիրում է՝ ուրախ լինի թէ տխուր, արգելափակուած թէ ազատ, ապրած թէ մահացած։

Բնական է, որ ամէն մարդ սիրի իր հայրենիքը, բայց հայի համար այդ սէրը բնական է լոկ պաշտամունքով։ Այս պաշտամունքի մէջ պետք է մոռանալ մանր քէներն ու ոխերը եւ հետեւել բանաստեղծի խորհրդին՝

Եւ այս ասում էք ո՛չ դուք, ո՛չ նրանք,
այլ ե՛ս եմ ասում,
Ես՝ Սիս Մասիսս,
անդո՛ւլ-անդադա՛ր-անվերջ գնացող իմ անքուն զանգով,
Գողթան երգերի չափով այլազան,
բամբ բամբիռների հնչումով պէս-պէս,
ամենատարբեր ելեւէջներով շարականների
Սիսն ու Մասիսն են զրնգում անվերջ-
անդադա՛ր-անդո՛ւլ.
ով ականջ ունի,
բլթակ հաւատոյ՝
Նա պիտի զգայ
իմ եռաղօղանջ զանգի ասմունքը,
իմ եռաբանեայ ասքի ղօղանջը,
իմ եռամատնեայ խաչակնքումի շնչող ստուերը.
-ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈ՛Ց...
-ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵ՛Ր...
-ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱ՛Ց՛

Այսպէս հռետորական շնչով վերջանում է Եռաձայն պատարագը եւ «Եղիցի լոյս»-ը։ Փակւում են փառաւոր յաղթանակի տխուր էջերը։ Նրանք սկսում են տխրութեամբ, ողբով, գոյատեւում շանթարձակումով, բայց երդւում են ապրել վճռականութեամբ։

«Եղիցի լոյս» ժողովածուն Սեւակի յաղթանակն էր ընդդէմ այն ամէնի, ինչն անդէմացնում ու ստորացնում է մարդուն եւ ոչնչացնում նրա արժանապատուութիւնը։ Այն սխրանք էր յանուն լոյսի, ճշմարտութեան եւ արդարութեան։

Պ. Սեւակի մեզ տուած վերջին հրաժեշտը եղաւ երկու բառով «Եղիցի լոյս»։